

միւթէսարքի փոխանորդ Գուճապետի
բաշայի ալ հետագիւր մը կուգայ թէ,
« Հայոց վանքին սեւեռը Մաղարայի
մը սպաննուեցաւ » եւ այս լուրը Պատ-
րիարքին կը հաղորդուի : Այնքերնի՛ց
լոյս, ո՛վ փոխառական ոճրագործնե-
րու խմբակ, քի՛չ կեաւ ողբացեալ
Ներսէս, Մամբէ, Պետոյ Երջմանեան
Արք-Եպիսկոպոսներու այնքան դառն
մահերուն ձեր պատճառ ըլլալն . . . ա՛ն
անգո՛ւթ խմբակ ոճրագործներու . . . քի՛չ
ցաւ պատճառեցիք Մկրտիչ Վրդ . Եւ առ-
նիսէն, Յակոբ Վրդ . Եւ Պատրիարքա-
րանի մէջ ձեռնարկ սպաննուելից եւ այժմ
սպաննուելու կարգը այց անմեղ զո՛հի՛ն
եկամ էր : Ապրի՛ Նայոց Պոլսոյ Պատ-
րիարքարանը եւ Երևոյ . Ժողովը,
ի՛նչ զովելի արդիւնք մը ցոյց տուաւ
եւ կուտայ Երուսաղէմոյ գործող մա-
սին :

Աղբաղեալ Գարեգին Մ. Վրդ . Իր
յառաջացած արքիւքով եւ հեղանմաբոյր
քնուկեամբը Ս . Յակոբեանց սխտի
միաբանութենէն սիրուած ըլլալուն՝
իրբու խաղաբար մէկը, Մայիս ամսոյ
մէջ Եմֆաի վանուց ատուչ նշանակ-
ուած էր որպէսզի ի Պոլիս փոխառական
Գայրքեան Մատթէոս ոճրագործ չիք-
վըդ . ի խմբակին յարուցած եւ այնքան
Պոլիս բողոքուած խռովութեանց ատու-
քը առնէ իր քողարարոյն ընթացքով
Խեղճ Գարեգին Վրդ . չէր ըլլար որ մ'որ
սա տողերը վանական Վարչութեան
չը գրէր « Դանօթ մարդասպան Յով-
հաննէս Գրիգորեան , միախնէճի պա-
րագ պըստուց Գրիգոր եւ կարգալոյժ
Մանուէլեան Յարութեանը , շարունակ
սեղաբանու գալով ինձ կայսրեան թէ՛
պէտք է շուտ անէ հետանա եթէ ո՛չ
մորուք կամ իրենք եւ կամ զքեզ ոչ-
խարի պէս կը մորթինք , շուտ հետա-
ցի՛ր վանքի Պոլիսէն նամակ առինք
որ Մատթէոս Վրդ . եւ ընկերները պի-
տի գան եւ ին , եւ ին » : Եւ արդարեւ
ուրախ ինչամիտները որ Եմֆաի վա-
նուց արդեանց վրայ ձեռք գրած շոր-
թիւքով կը շորթին , եթէ իրենք չըս-
պաննեցին , գրամի ուժով սպաննել
տուին խեղճ ձեռուին Գարեգին Վրդ .ը :

Եւ անո՛ւ ալ աւելի զարմանալին , եւ
ստույգ անանտես վկայի մը այն խոս-
քերը՝ որ Գարեգին Վրդ . ի սպաննա-
նէն քանի մը օր առաջ Յովհաննէս Գր-
իգորեանին , Մանուէլեանի , եւ Գրիգոր
ըստած իսփառաշրջիկին ձեռքը սեւած
ու կարգացած է Պոլիսէն եկած Գարեք-
ձեան Մատթէոս վանք քանդող Վրդ . ի
վերջին նամակը : « Աննոց կըլի՛ք , տ-
րիացէք եւ սիրա սոկ՛ք , հաս բոյր
ազգը մեզ հետ է եւ մեր գործին պաշտ-
պանն է , զոր օրինակ՝ Եմֆաիկեան եւ
Պէկեան էֆ . ներք . ձեզ տեսնանք Գա-
րեգին Վրդ . ր ամենայն իսպասակա-
թեամբ վրանակը եւ եթէ չի յաջողիք
հա՛ ի՛նչ պիտի ընէք . . . : Մեզի գրամ
հասցուցէք հոս գրամի շատ պէտք կայ՝
ամեն քան գրամով կըլլայ . . . Մերք
Վրդ . ի բերած 500 լիբան լինցաւ ,
զուք ալ գրամ մի՛ խնայէք Գանդոյ-
եանները եւ անոնց ընկերներ՝ պոյսճի
կարապետը եւ խուճիկներին ձեռքէ չը
հանելու համար . . . ձեզ տեսնամ շատ
ապրիք » :

Չմտնամ ըսելու թէ , Գարեգին
Վրդ . ի սպաննանէն քիչ օր առաջ ձա-
նօթ ոճրագործ Յ . Գրիգորեան սո՛ հե-
նազիրը ստուած էր Ամեն . Ս . Պատրի-
արքին որ Գուճապետի բաշայի սեր-
ուեցան : « Գարեգին Վրդ . ք շուտ արու-
սաղէմ ուղեցէ՛ք վերջը շատ կը զղջաք՝
(իրաւ ալ զղջացինք) մեզի Պոլիսէն
գիր եկաւ , որ ուրիշ վարդապետները
պիտի գան , այս մեր վերջին խօսքն է :
Անքէրիմ երեք համալսարան սարառող
Պէկեան , խեղճ սիրեմ , որ զու ալ
Գրիգորեանի գրած եւ թէ՛ « մի՛ վախ-
նաք , գործեցէ՛ք » , եւ գործեցին անա :
Խեղճ Գարեգին Վրդ . ի սպաննան
զլիսա որ պատճառներէն մէկն ալ այս
է , քսա երթալու թեան : Երուսաղէմի
հայոց վանքը տար երկու տարիներէ
ի վեր խռովութեան սովիւն մը դար-
ձնող Չնուցչի սիրաբուճակ Աւետիս
ձառան , ինչպէս գիտնէք՝ բարիբար
ստոճանագրութեան շնորհիւ Բաղաքէս

ամենայն իսպասակութեամբ վանա-
ուեցաւ : Պոլիս Երևոյ , Ժողովոյ մէջ
առանց խղճանաբերու ձեռք խղճին
վրայ գնող ու խառող Հայկազուն Պէկ-
եան Երուսաղէմ դանուած պահուն ,
հայտեղե Եմֆաի բաշայի գիմելով կու-
գաչէ որ վանքը զորքերով պաշարէ
մինչեւ կեանքերու շինուելու տասի-
ճան . . . եւ ոճրագործ Աւետիսը վանք
վերադարձնէ , բայց ամեն ճիշտ անյա-
ջողութեան մասնուեցաւ : Գարեգին
Վրդ . ի սպաննանէն քանի օր առաջ ,
ոճրագործ Աւետիս յաջողած եւ Երու-
սաղէմ եկած էր՝ պատրուակ բունելով
թէ՛ Գանդալու ըստած խռովարարե-
րու քով 300 լիբան , Յուսոց վանքը
1000 լիբան ունի եւ պիտի առնէ , բայց
սեղապան կատարութիւնը այց աչ-
խարճածանօթ լիբրին աչխարճ չեկած
անոք ինչ ըլլալուն ծանօթ ըլլալով
անմիջապէս ձերբակալեց , վրան գրո-
նրու մեղքեր հարցունք ստնելով քան-
տարիկն ու յաջորդ օրը ընդ հսկողու-
թեամբ քաղաքէս հետադուր : Եւ որով-
հետեւ հանգուցեալ զօճը Տ . Գարեգին
Վրդ . Աւետիսի Եմֆա զարուս լուրը
կանխած էր հետագրաւ : Գրիգորեան
Յովհաննէս հետագրառուէն կ'իմտնայ
Գարեգին Վրդ . ի Երուսաղէմ հետագրած
ըլլալն , ցաւ կ'զգայ եւ ալ աւելի ցաւ
սա էր թէ՛ ինչո՛ւ Աւետիս նա զնա-
ցած պահուն Յով . Գրիգորեան նաւա-
հանդիսար արդիւնք են ու նաւ երթա-
թալու չեն թողուցած (որ սով մը լի-
բան հոս առնէր) եւ անա այս ամենու-
սակալի ոճիրը քանի մը օր վերջ սե-
ղի կուտնայ : Ոճրագործ Մաղարային
սպաննութեան պահուն իսկ , շնորհիւ
կատարութեան ձերբակալուած է եւ
տեսնէք ի՛նչ զաղանթներ . . . երե-
ւան պիտի գան :

ՀՐԱՅԻՐ

ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲԱՅԻՐ

Մասացած ենք Ձեր Չ Օղոտուս եւ
687 համար զըստութեան , ներստեղծ
Գանդիլի Հայոց Առաջնորդանին 1043
թիւ մէկ պաշտօնակալ յայտարարութեան
ընդօրինակութեամբ , որուն հրատա-
րակութիւնը ինչ րոյ ալ կամ ոչ , Ձեր
կամքին թողուած է Առաջնորդարանի
կողմէ , եւ զոր՝ կը փոփոխիք զայն հը-
րատարակած տեսնել Արշալոյսի մէջ :

- Մեր զխառու թիւնները այց նամա-
կի մասին՝ ի մէջ այլոց՝ հետեւեալներն
են .
- Ա .- Իրաւամբ զարմացանք՝ նկա-
տելով որ՝ մամանակ մը ի վեր բոյս-
րովին զարկեցնել յետոյ Ձեր գործոց
մասին Արշալոյսի անդեկալութիւններ հո-
ղորդելը , եւ այս՝ մասնաւոր գիտամե-
րով՝ այսօր պատիւ կընէք գիմելու ի-
րեն՝ այնպիսի գէպի մը համար , որով
եւ ո՛չ զրազած եւ ո՛չ ալ սերած է :
 - Բ .- Ձեր « աւետանայ » Դիւանի
հանդումները ի նկատի ունենալով , այց
պիտի խնդրոյ մը առաջնութիւն տըր-
ուելը կանխաճառ , անյարմար եւ ոչ
նուսող անանկի կը գտնենք :
 - Գ .- Այց հրատարակութեան անկ
կրնայիք համոզել փաստերով մեզի ըն-
դարձակ լուսաբանութիւններ առ նա-
խորդ քանի մը տարեշրջաններու եւ Աղ-
քատարանումի հայեանքը եւ զօրժա-
նութիւնները շատ վերելքոյն քննող
Մանսխուճիկի անդեկալութիւններ վը-
բայ , որոնց համար կըտուի թէ՛ զոճա-
ցուցիչ ըլլալէ շատ հետի են , եւ թէ՛
Աղքատարանումի վարկն ու զրամը ոճիր-
ներ գիւրացնելու եւ ծածկելու գործած-
ուած են :
 - Դ .- Ձեր այց յայտարարութիւնը
պէտք է որ ուղղուէր նախ՝ Առաջնոր-
դարանի պաշտօնակալութիւն Լուսաբերի,
որ պարտաւոր է անոր ճշտութեանը
վրասնելը , եւ յետոյ՝ այն թիւրթիւն , որ
այց խնդրը յուզած եւ պատճառ եղած
է Աղքատարանումի Գործ . Մարմնոյն
Բաղաք . Ժողովին քննութիւն մը պա-
հանջելու չափ նեղանալ , եւ ընդ փոյթ

- զրաւոր գոճացում ալ ստանալուն . . .
- 1 .- Ձեր նախանձախնդրութիւնը եւ
Պատ . Բաղաք . Ժողովին առ այց
քննութիւն մը բանալու համար ցոյց
տուած կարուկ ջանքերը եւ փութկո-
սութիւնը զովեւեղ ընդունալով կը
զսնկել . . . եւ այց ստաբիլան բարի
կամեցողութիւններով օժտուած ժող-
վականներու հետեւեալ հարցերը կու-
ղենք . նախ քան ձեր նամակին հրա-
տարակութիւնը՝ անխաղաղ գէպի
նկատմամբ վերաքննութիւն մը ուղղու-
կի մեր կողմէ անհրաժեշտ համարելով .
Հաճեցէ՛ք ըսել մեզի ուրեմն թէ՛ .
- 1 .- Իրաւ է՞ որ շրջանաւարտ Գործ .
Ժողովոյ անդամներն Տ . Պաղատար
նախնականի վէճ գիտամեղուր հար-
ձանքներ ի գործ գրուած են անդե-
ղալու արժանի ընդ . Ժողովին մէջ :
- 2 .- Իրաւ է՞ որ՝ շրջանաւարտ
Գործ . Ժողովոյ մէջ անպիսի զեղծու-
ներ եւ կողմնակցութիւններ սեղի ու-
նեցած են :
- 3 .- Իրաւ է՞ որ նախորդ Գործ .
Ժողովոյ Անեղանգի Գարեգին Պահա-
նկալիկին գրութեան հետեւեալով՝ իր
աները « Մատակարարութեան » պաշ-
տանին կողմէ յաջողի յետոյ , ո՛չ մի-
այն քանի մը շարաթուան մէջ անոր
մասնականի վրայ 150 գր . ի ալ յա-
ւելում մը ընել տուած է , այց եւ անկէ
զատ՝ մասնակորտին կըրորն ալ 100
գր . ի ամսաթիւն մը յատկացուցած է .
Ասով կը հաստատուի թէ՛ Աղքատար-
անումի կողմին մէջ անախառնութիւնը
կը պակսի եւ կողմնակցական գործու-
նէութիւնը ցայտուն կերպով երեսն
կուգայ , որուն զեղծուր քննիչ սեղի
չիտակ պիտի ըլլար :
- 4 .- Իրաւ է՞ որ հակառակ Աղքա-
տարանումի կանոնադրին արամադրու-
թեանց , անցեալ շարթուան ընտրու-
թեան մասնակցող անդամները , երեք ,
վեց , ինը , ամեն եւ նոյն իսկ տարի
մը իրենց բանակալները ըրած չեն ,
եւ նոյն իսկ փոխ-Առաջնորդ Պ . Նա-
ղարէթ Աղադարեան , մէկ տարի ի
վեր վճարուած ըրած չըլլալով հոնցերձ,
ուրիշ անգամի մը հետեւեալ յատենի
ժողովոյ ստանալէ յետոյ միայն թոյլ
տուած է քուէի մասնակցել , այն ալ
համեմատականի քուէարկութեան մէջ :
Այս ալ զեղծում է՞ կանոնադրին աը-
րամադրութեանց զէ՛մ :
- 5 .- Իրաւ է՞ որ Աղքատարանումին
մէջ արեւոյ անիշտանութեանց եւ վեղ-
ձուանութեան շնորհիւ պարկեշտ ազգային
մը այս վերջերս այց ընկերութեան վի-
ճակահանութեանը պատճառաւ կարեւոր
ճիւղանքու հանդիսուած է : Մեղքը է՞ ր
այց ազգայինին :
- 6 .- Իրաւ է՞ որ ընկերութեան
գործերուն մասնակարարութիւնը անիշ-
խանութեան եւ Մատակարարին քու-
հաճոյքին յանձնուած է , այնպէս որ ,
այս վերջինը՝ փոխանակ անգամաճար-
ները գանձելով զբաղելու , օրկէ ստ-
անալով ալ կամէ կեղի , բացի իր յա-
ւելում եւ ճիւղացեալ ամսականէն , իր
ստորագրուած ամսանները մասնաւոր
այս ու այն հրատարակութեան կամ
թիւրթիւն զէ՛մ ազիտարար պոյսօրի թե-
լադրանքներ կընէ այս ու այն ազգու-
յինին , եւ ազատ քուտթիւններ եւ
սուտ ու լուս տարած այնութիւններ
գանցընելով կըրաղի :
- Եւ եթէ աւելցնենք որ իր « ստնե-
րուն » համար ծրագրուած ոճիրը եւ գո-
ղութեան մեղադրեալութեան վարձարու-
թիւնն է մասնակարարութեան այց պ ոչ-
տունը՝ այն ամեն աւելի հոտիտայի կը
գառան կըզմ զեղծութեանը :
- Նկարագրականը ամբողջացնելու
համար փութեալ ըսել թէ՛՝ այս քալի՛ն
մարդը Մարտիրոս Թերզեանն է արհեստը
կողակցը , եւ որովհետեւ ծրագրուած
ոճրոյն եւ գողութեան բուն պատճառը
հանգուցեալ Հոգեւոյ Տէր Ղեւոնդ Ե-
պիսկոպոս Երջմանեանի Ձեռնարկներն
էն . միտերուն մողթիւնը որ խիտ
Բարձրէն տրուի այց եւ նման ոճրագործ
նեղու արժանի վարձարութիւնը . . .
- 8 .- Իրաւ է՞ որ Աղքատարանումին
վիճակահանութիւնը լոկ ազտու էնթ-
րիկներու պատճառաւ հրատարակ չելաւ

աակալին , ուրկէ պիտի օգտուէին կի-
լիկցի ինչ՞ աբիսահալներն ու տուն
սեղ եւ ամեն ինչ կորուսած թափառա-
կանները :

9 .- Իրաւ է՞ որ նոյն իսկ չըն-
չին գուճարներու համար զեղծութեան
տեղի կուտնան մասնակարարին կողմէ
մինչեւ նպատակաւորութեան համարու-
թիւնը հասնելու տասնճան :

10 .- Իրաւ է՞ որ Աղքատարանա-
մին ըրած մեծ ու պղտիկ վճարութեանը
թայֆայական հայեանքու եւ յարթա-
կան ընդունելութեան եւ խղճմանքներ զը-
նեղու կը ծառայեն տեղի քան թէ բա-
րեարարու , վիշտեր ամոքելու , թըշ-
ուսուութիւններ սխտիլու :

11 .- Իրաւ է՞ որ շատ մը առիթ-
ներով կարեւոր գուճարներ վճարուած
են ոչ-կարող կարուէններու եւ . . . ուճի-
ներու , այս կամ գործը գլուխ ընկելու
համար . . .

12 .- Իրաւ է՞ որ նիւթապէս բա-
րեկեղիկ ժողովականի մը կըրորը
կամ ընտանեկանի ամսական յատկացուած
է , բնականաբար բուն աղքատներուն
իրաւունքներն խորտակով :

Տակալին յայտարարուած հարցումնե-
րու շարքը կարելի է երկարել , բայց
առ այժմ այս հարցերուն օրինաւոր եւ
քանաւոր պատասխաններ տալէ իբրեւ
պատասխար քաղաքացի եւ ազա ուրիշ
կարգ մը երկրորդական եւ նոյն իսկ
կորուցական խնդիրներով զբաղեցուցէք
մեզ :

Նախ զեղծութեանը մտքերնք եւ օ-
րինապահ ըլլանք , յետոյ թայֆայական
փոքրաքի հայեանքը մէջ սեղն վեր-
ցնենք . հայ ըլլալին ընդունելիք .
ու անկէ վերջն է որ ոչ-պաշտօնական՝
բայց ամէն կասկածէ վեր վիճարկութեան-
ներ կուտան ամեն կողմեր ալ . . .

ԽՄԲ.

**Ի ՄԻՒՍ ԱՆԳՍՏ ԳԱԼՍՏԵԱՆ
ԵՎՍԻՔ ԳԵՂՁԷ ԱՆԵՏԻՍ ՍԵԱՐԿ
ՄԱՌՅՈՒՅԵՐ ԵՆՈՒՍԱՂԷՒ ԵՒ ԱՐՏԱՎՍՄԱՆ**

Գրիգոր ի մեջ՝ մեր յայտնեցաւ
Գոր Աւետիս , վրդնաւոր .
Խաղաղութեան՝ ձայն երկնցաւ .
Ձի մեծ գողը , ախարուցաւ .
Բալասագին՝ մի անձ կար
Եղբայր եղբոր , հաւերք սրաւ .
Թշտաւորեան՝ մտնիլ հետացաւ .
Բալասիս մեջ՝ սեր սրտեցաւ .
Արց վանակալն՝ բարձրեալ ըզձայն
Տո՛ւր՝ գոհեմարիւն ի մի քեան
Սուր Գրիգորին՝ Հայ Ազգայնեան .
Սուր անխիստ եմ միտարն :

ԲԱՌԻՔ

**ԱՂԲԱՅԻՐ ԳԱՆՈՒԹՅԱՆ
ԼՈՐՔԵՐ**

ՅԱՆՎԱՐԴԱՄԱՀ

Առտուածցնելու Երեսփոխանը
Յակոբ էֆ . Պապիկեան , որ Օսմ .
Խորհրդարանի կողմէ իբր քննիչ
Ատանա զրկուեցաւ , եւ որ կիլիկ-
եան Հարդին կալուակերպիչներուն ,
մեղապիկցներուն ու յանցաւորնե-
րուն նկատմամբ խիղախ եւ ռնիւե-
րադաս անգեկաղիք մը ներկայա-
ցուց Օսմ . կատարութեան , յան-
կարծամահ . . . եղած է կ'ըսուի :

Այս կարգի յանկարծական մա-
նեղու մէջ մարդ փնտաւու կըս-
տիպուի այնպիսի մասիկներ որոնք
յաճախ կը շարժեն ճշարտու-
թիւններ խոսողներու զլիսն վրայ .
նմանօրինակ պատահարներէ
գառաւով , Օսմ . Մահմ . կուտալա-
րութեան անունն է միայն փոխ-
ուած : Գործերը նոյնը կը մնան ու
պիտի մնան : Պապիկեան զո՛ մըն
է իր պարտականութեանց . . .

ԳԱՍԱՍԱՆ

Ատանայի նախորդ կուտակալը
ձէ-վար , ընդ հսկողութեամբ Ա-

նատուրի երկաթուղիով Ատանա զրկուած է, տեղւոյն պատերազմական տանին առջև դատուելու համար և

ԱՃՈՒՐՎ

Երկրագործական պանքան Ատանայի հայերէն շատերուն արտետերը ծախու հանած է, իսկ Պատրիարքարանը Բ. Գոնէն պիտի խնդրէ որ այդ ածուրդը տեղի չունենայ:

ԵՐՈՒՍՈՂԷՄ

Երուսաղէմի հոշոց քննիչ Յաննաթանոսը, որոշած է տեղւոյն, բոլոր միաբանները՝ այլ և այլ բացատրութիւններ պահանջելու պատրուակին տակ Պօլիս փոխադրելու այց չենք գիտեր թէ՛ կիկէ այդ որոշումը քալէ, Երուսաղէմի ընթացիկ գործերը որո՞նք պիտի վարեն, ...

Ամեն Տէր Երուսթիւն Պատրիարք Կեդր. Վարչութեան նախագահ Ամենպատիւ Տէր Եղիշէ Ս. Պատրիարքին զանգատած է Կեդր. Վարչութեան իրատուութենէն դուրս գտնուող խնդիրներու միջամտելուն և բնական անորինութիւններ ընելուն դէմ: Աոյն զանգատագիրը շատ մը օրինակներու վերածուած է:

ԱՐԲԱՆՍ

Հալէպի Առաջնորդական Տեղապահը Պատրիարքարանէն նպատակնդրած է Քէսսպի մէջ սրբանոց մը բանալու համար:

ԳԻՐԲԵՐ

Ստացած ենք Թիֆլիզի «Աղբիւր-Տարազ» Հանդիսի թիւ 6894. հրատարակութեանը «Մեղանշնէ Լեռ» տիպոգրաֆ, թարգմանութիւն Աստ. Բէկ-Յովսէփեանի, և «Թրքահայ գրականութիւնը Մամուլի ազատութեան խնդիրներ» տիպոգրաֆ Երկաթուղիները, ծախով գրողէս Ենովք Արմէնի: Այս վերջինը խիստ և անաչառ, քննադատութիւններ կը պարունակէ հայ գրականութեան մասին ընդհանրապէս, և Պօլսոյ լրագրութեան նկատմամբ մասնաւորապէս, և շատ մը ճշմարտութիւններ կը տեսնենք հոն լուսնով մը բացատրուած:

ԻՐԱՐԱՆՅՈՒՄ

Արշալոյսի նախորդ երկու թիւերուն միջոցաւ Գահիրէի հոյ ծրնողքներուն ուղղուած կոչերը, Գալտեան երկուսն վարժարանաց բարոյական մակարդակը բարձրացնելու վրայ խորհրդակցելու համար, մէկ քանի շրջանակներու մէջ մեծ իրանանցում առաջ բերած է:

Մենք կը յայտարարեմք թէ՛ անոնք որ այդ մեղով քննադատութեանց առարկան էին, փոխանակ վրդովելու գոհ պիտի մնային և նոյն իսկ չնորհակալութիւն յայտնելու պիտի փութային, այդչափ բարի և օգտակար բաներու վրայ մտածողներուն և

Բայց անանկ չէ՛ եղեր. մեր

պաշտօնեաները կուզեն որ՝ ոչ ոք իրենց բուն արժանիքին վրայ խօսի: Այսպէս մտածելը անգամ իր կարգին գովելի բան մը չէ կրանք:

ՏԵՂԱՎԱՆ

ԽԱՐԵՆՈՒԹԻՒՆ

Տեղական թերթերէն մէկ քանին նորօրինակ խաբէութիւններու մասին կը գրեն, թուրքիս) մէջ հոշակուած սահմանադրութեան արժանապատուութիւնը պատճառ յոյց ապրով աստիցմէ մէկ քանիին:

Գրեթէ մինչև ցարգ Եգիպտոսի մէջ չ'անհնուած խաբէութիւններ տեղի կուենան, կ'ըսեն, թուրքիս) մէջ սահմանադրութիւնը հոշակուելէն ի վեր:

Ենթադրեալ բարձրաստիճան թուրք սպայ մը, Եէմէնէն կամ Հիճազէն վերադարձած որպէս թէ՛ Պօլիս գնալով իր զօրարանակին միտնալու համար, Եգիպտոսի մէջ շատ մը շահատակութիւններ ի գործ գրած է:

Այս կարգէն է ի՛ պէյ սնունով կարծեցեալ հարեւարագործ, որ ինքզինքը ներկայացուցած է թուրք նաւատարմին հրամանատարը, մինչդեռ պարզ զինուոր մ'է եղեր Խուսէյի զօրարանակէն:

Ոստիկանութիւնը եղած գանդաններէն հաստատելով որ Եգիպտոսի զանազան քաղաքներին մէջ կարեւոր խաբէութիւններ ի գործ գրած է, սակայն կեղծ ծովային հրամանատարը կերելի թէ՛ օձիբը սղատած է որ ոստիկանութիւնը պէտք տեսած է ամեն կողմ անոր հեռքերը գանդու միջոցներ ձեռք առնել:

ԱՆՁՆԱՍՊԱՆ

Ֆրանսացի Պ. Ժ. Սովէս, ոչ ձիւռ վաճառականութեամբ կը բաղէր, բեփօլիքով ինքզինքը ըսպաննած է, իր ասոր մէջ:

Անճնապանութիւնը կը վերագրուի, գործերուն անյաջողութեան և յետոյ իրենց պահած մէկ ազգիան տառնէն հեռանալուն, ու մուսնանալու պատճառաւ:

ԳՈՂՈՒԹԻՒՆ

Գողութիւնները՝ այս ասորի մանուանդ՝ մեծ հասեմտութիւններ աստիճալ վրայ են:

Օր չ'անցնիր որ աստիկանութիւնը մէկ երկու և աւելի գողութիւններու հեռքերը փնտնելու չ'առկարի: Մեծագոյն մասամբ ծառաներ են հեղինակները կատարուած գողութիւններուն և այս վերջիններքն են որ հիմայ կարծանքի են թարկուած են, ո՞վ գիտէ որ հնարամիտ խրատուին հաշուին:

Վերջացող շարժումն մէջ, շատ մը խուզարկութիւններ եղած են հին ու նոր ծառաներու ընտկա:

բաններուն մէջ և արդիւնաւոր գիւտեր ալ եղած են: Աստուած շատ քաջել չ'ապ:

ՍԻՐՈՅ ԽՆԴԻՐ

Քենիներու հետ սմուսնանալու հարցը եթէ ամեն երկրի մէջ տակաւին չ'ընդհանրացաւ, սակայն քենիներու հետ սիրաբանելը ներքին գտնողներ կան եղեր, միայն թէ սպայիսի անյարմար ձեռնարկներու մէջ քենիկալին բարկութիւնը շարժելու աստիճան յառաջ գնալու չէ, քանի որ պաշտօնական վաւերացում կրած չէ սակաւին քենիի սիրաբանութիւնը:

Առջի օրը, Ֆէկիտէի բնակիչները՝ երկու պահանջներու և մէկ քենիի արեւուալի կուխին հանգիստեալ եղած են, բայց բարեբաղդաբար ոստիկանութիւնը շուտ վրայ հասնելով վերը դրած է կուսոյն ծանրը հետեւանքներուն:

ՀԵՌՈՒՄԳԻՐ

Կ. Պօլիս 3 Օգոստոս. - Խորհրդարանին նիստը յուզումնայից եղաւ:

Հիշելի բաշա պահանջած է կա՛մ ընդունիլ առաջարկուած վարչական վարկերը և կա՛մ զանոնք Յաննաթանոսը պիտի զրկել:

52ի դեմ 91 ձայնով ընդունուեցաւ վերջինը:

Լոնսրա 4 Օգոստոս. - Կրեսէի վրայ Հէլլենականի որոշակ պարզուելուն առթիւ եղած դիտողութիւններուն նկատմամբ, Յաննաթանոսը վր կրանակագիր մը հրատարակած է սակի վերջ Կրեսէի ազգային որոշակը պարզել հանրային հասարակութեանը վրայ:

Կ. Պօլիս 3 Օգոստոս. - Մեծ սերտքանցից դեպքները, Կրեսէի վրայ պարզուած Հէլլենականի որոշակը անփոփոխ մնալու համարձակութիւն յայտնած են:

Լոնսրա 4 Օգոստոս. - Թայնը կը յայտարարէ թէ՛ ֆաղսֆալիս կացութիւնը փոխուեցաւ: Ապացոյցներ կան թէ՛ կառավարութիւնը արեւի հասարակ դիրքի մէջ կը նիստի ինքզինքը:

Լոնսրա 4 Օգոստոս. - Կրեսուկան հարցը սուր կերպարանք մը առնելի կսկսի:

Թուրքիս որոշած ըլլալով իր իրաւունքներէն քան մը չը կորուցնել, պահանջած է Յաննաթանի կառավարութեան, որպէսզի իր գործերը և պաշտօնակները յիսու կոչէ:

Յոյն կառավարութիւնը պասախուսեց թէ՛ այդ հարցը պաշտպան չ'որոշուեց միջոցաւ կրճայ կարգադրուիլ, որովհետեւ անոնց հարանդակները եր որ յոյն պաշտօնակներ Կրեսէի դիտեցան: Անհարակատիս չէ թէ Ռոսս

գեներոյ թուրք նախարարը Կրեսէ տրույ, բայց կախապէս պէտք էր ծովային Գանպըր հոն զրկել:

Կրեսիս 5 Օգոստոս. - Կառավարութիւնը անկեանքեմ դժուարութեանց կը բաղիսի քս կրանակագրի Գործ. Յաննաթանի կրեսէի վրայ ծածակող որոշակները վերցրուելու համար:

Վիեննա 5 Օգոստոս. - Ն. Բ. Խսիլը Բարիս մեկնեցաւ:

Կ. Պօլիս 5 Օգոստոս. - Կախարարաց խորհուրդը որոշեց, որ եթէ պաշտպան սերտքանցից հէտ Կրեսուկան հարցին համար կասարտած բանակցութիւններ անկայաս ըլլան, Յաննաթանէն պահանջել իր պաշտօնակներուն յիսու կոչումը:

Լոնսրա 5 Օգոստոս. - Ռուսիոյ Վեհապետները մեկնեցան: Իրենց Անգլիոյ Վեհապետին տուած այցելութեանը, որչափ ֆաղսֆալիս, անյնչափ ալ ընկերային յարաբարիներ վերապահուած են:

Չարիս ուրախ տրանսպորտներ և անկեղծութիւնը յաւազոյն սպասորտներ կը թողան:

Կ. Պօլիս 5 Օգոստոս. - Կրեսական հարցին համար թուրքիոյ մէջ շատ իրարանցում կը տեսնուի:

Կրասի թէ՛ Բ. Գործ չորս օր սպասելէ յետոյ, վճարակտրէն պիտի պահանջէ Յաննաթան սպանելուն Կրեսէէն հեռացումը: Յոյն կառավարութիւնը դիտել տուած թէ՛ Կրեսէի պաշտօնակները աչ իս իր գորարանակներուն չեն պահակիր:

Կ. Պօլիս 7 Օգոստոս. - Ֆերիս բաշա հրաւարեցաւ և անոր յաջորդեց Թայնը բաշա:

Մեծ սերտքանցից դեպքները Մեծ Եպարֆու Հիլիսի բաշային աչցելելով պահարակեցին թուրք կառավարութեան ընթացքը, որ ընդհանրապէս արեւիցի կացութիւնը կը դժուարացնէ:


Կ. Պօլիս 7 Օգոստոս. - Կ. Պօլսոյ մէջ մեծ մտանդութիւն կը տեսնուի, հայոց և յունաց վաճառատներուն մէջ վրայ դրուած նշաններուն համար:

Ոստիկանութիւնը ասոնց հեղինակները կը փնտնէ:

Կ. Պօլիս 7 Օգոստոս. - Սփիւսի սպանուած համակներ կը գանգասին թուրք ոստիկաններու և հեծեալներու զիջուց ինքերու և մասնաւորապէս յոյներու վրայ ի գործ գրած վախարակեանց դէմ:

Գիւլիսիները մերտակալելով շարժարակներու կենարակէն, պանուած գեներալներու տեղերը յայտնելու համար:

Մախու դեմոնին յայտարարութիւնը տե՛ս շարքորդ կրեւոր:



ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՊԵԱՆ

ՇԱՐՍ. ՄՕՀԱՄՄԷՏ ԱԼԻ, ՏԱՐՊ - Է.Լ. - ԷՆԱՊԱ ԹԻԻ 1

ԿԵՐԷ ԵՒ ԿՈՒՂԱՄ ՄԶԿԻԹԻՆ ՃԻՇՏ ԴԻՄՍԾ

Երկար տարիներ կարեւոր տուներու մէջ աշխատելով փորձառութիւն ստանալէ յետոյ, այժմ իր սեփական վաճառատները ունի, ուր կը վաճառուին թէ՛ նոր և թէ՛ գործածուած կարի մեքենաներ ամեն տեսակէ, միշտ առաջնակարգ ֆաբրիկաներու ապրանքները ընտրելով: Երկրագործական համար երբ պէտք ըլլալ, յաճախորդաց տուները կայցելէ և իր կատարած նորոգութիւնները տարիներու համար կ'երաշխաւորէ: Կը վաճառէ նաև ամեն տեսակ կարի վաճառաններ և ասոնց նորոգութիւնները կ'ընէ անմրցելի յաջողութեամբ և գիւրգիւր: Իրեն զինուղ բոլոր յաճախորդներն ալ գո՛հ պիտի մնան:

ՄԵԾ ՎԱՃԱՌՄՏՈՒՆ ԾԽԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻՎԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՉՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱՎԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՅԵԹԵԱՆ ԵՂՐԱՐԻ

ՅԱՏԿԱՆԵՐ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵՈՒԷ

Արևելեան բնակիչ ծխախոտներէ պատրաստուած թարմ սիվարէթներ անմրցելի աճան գնեցող ունենալու կամ վախճելու համար, աճէն սնցած և աճէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատուներ :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիվարէթներու լաւագոյնը զանազանութիւնները գոնելու համար հարկ չկայ հոս ու հոն ժամապահուս ըլլալու . բաւական է անգամ մը անդամուտու ուղեկիւ մեր վաճառատուներն :

Պարական ստեղծարարներ թէմպէրի ալ և ալ տեսակները յոյսի մեր վաճառատուներն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է :

Մեր վաճառատուներ վերջապէս, գիներու աճանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ լաճէն ստեղծարարներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անմրցելի ապացոյցներէ՝ մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրոտօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով կցած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՅԵԹԵԱՆ ԵՂՐԱՐԻ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Ա.ՉԱՏՈՒԹԵԱՆ ՇԱԽԻՂԸ

ԵՐԿԵՑ Ա.ՉԱՏՈՐԳԻ

« Արշալոյս » ի Տոյրառնէն նոր լոյս տեսու երկատարոյ հեղինակին լուստարի պատ կրօղը « Ա.ՉԱՏՈՒԹԵԱՆ ՇԱԽԻՂԸ » զբժշկել :

Չեղանա անմրցելի գնահատուած է սոյն երբ . գնել փափաքողները պէտք է զիմեն « Արշալոյս » ի ապարանը :

ԳԻՆ ՄԷԿ ՅԻՍՆԻ
Մանսի . - Երջականերէն նամակագրօջ ալ կրնայունի : և և մեծարանակ գնողներուն 20 տա հարկուրի գեղ կըլլայ : 1--4

ԳՅՅՈՒԹՅՈՒՆ

Լօզանի Հայկազեան Վարժարանին

Տնօրէն Մ. Նալբանդեան

Տր. Գիտարևանց

Բաժնեկիւնը Երուսալ 7 Թրակց. Թուրքիա՝ 30 զրջ. Ամերիկա 1 1/2 Տօլար. Թուրքիա և Պարսիաստան 3 Բոլարի :

Հասցէ Mr. M. Nalbandian
Institut Armenien
(Suisse) Lausanne

ԾԱԽՈՒ ԳԵՏԻՆ

ՇԱՀՈՒԹԵՐ ՊԱՏԵՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Մէնշիէթ-Էլ-Սաարի կայարանէն ճիշդ երեք վայրկեան հեռաւորութեան վրայ, օդատուն և երկու կողմերը ընդարձակ խճուղիներ շինուած, ջրամբարով միասին, հինգ կտոր ծախու գետին կայ, ուրոց ատրածութիւնն է .

ԸՈՏ ԲՆԱՆԻ

Թիւ 63	բառ. մէթր.	1079,18	տանգ.
« 56	«	1075,85	«
« 61	«	1098,87	«
« 66	«	1127,79	«
« 71	«	1146,82	«

Թէ՛ միանալու և ի՛նչ մաս առ մաս գնել փափաքողները՝ հարկ կը զած մանրամասնութեանց ծանօթանալու համար, աճէն օր կէս օրէն մինչև ժամը մէկ, կրնան գիտնել ձեռնարկի Տպարանը, Եւրա Ապա-Էլ-Ազիզ, Երեթ Բաշայի պարտեղին գիւմաց :

Գինը գիւրամատչելի է :

ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱԳ

ԽՂՃՄՏԱՆՔԻ ՉԱՅՆԵՐ

Մօտ 100 էջերէ բաղկացած « ԽՂՃՄՏԱՆՔԻ ՉԱՅՆԵՐ » զբժշկել, որ զանազան նիւթերու վրայ կեանքի գրուողներ կը պարունակէ, Հեղինակին պատկերով, և ընտիր թուղթի վրայ տպագրուած է Պօլսոյ մէջ Հեղինակը՝ Գրիգոր Զոհրապ, Տպագրական բոլոր ծախքերը ընելով, աճողը հասցիքը յատկացուցած է Ատանայի Հայ արկածեալներուն :

Գինը, Թուրքիոյ համար 5 զրջ. է, 40 կոպէկ, 25 Սէնթ, 1,25 ֆր. և կը ծախուի Պօլսոյ բոլոր գրագիտաներուն քով : Գահիրէ՛ գիտել Հայոց Սրճարանի Տնօրէններուն :

Mr. A. Balian
Le Caire
Egypte

ՍԻՆԿԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐՊԱՅՈՒՅՈՒՅԻՉ Ժ. ՆԱՅՏԻՆԻՎ

Պալատի փողոց . Թաղեկապի սեփականութիւն, Պրիտիօլ Օթէլի ճիշտ գիւմաց Գաֆէ Տր Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՃԵՐԱՆՆԵՐՈՒ ՊԱՂԱԲԵՆԵՐՈՒՆ ՄԷՉ ՄԱՍՆԱԾԻՐՎԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկերներն են և ասոնցով մինչև ցարդ 17.000.000 ծախուած է :

400 հ աւելի վիտրակն և մեքենաներով վարձատրուած, Եւրաշխարհայ մեքենաներ, ՎԱՄԵՆԵՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ա.Ո.Չ.Ի.Ն ՄՐՅԱՆԱԿ

Փարսի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԿՂՈՅ ԿԱՅՆԵՐԱՎԱՆ
ԵՒ ԲԱՂԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԿՈՒՆԵՐՆԵՐ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՆՏԻՎԱԿԱՆ ՅԱՆ

Կեղծերէն զոչանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկերի յատկանշիկ



Չրի դասեր և նորոգութիւններ, Սինկեր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ :

Վճարմանց գիւրութիւն

Փոխանակութիւն հիւրերու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

Գին ՉԱՓԱՌՐ

ՍԱՍՈՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶՈՐԻ ԱՄՍՈՒԹԵՐԻ

Ստացանք Մատուռի երեք թիւերն ճօն բովանդակութեամբ, 1: 48 ութածալ :

Տնօրէն Խոյսայի և Տիւրք Տիւրքան Սիւրմեան, Անգամ Գիւմանի Օսմ. Նախաձեռնարկ Բնկերութեան և Աստուցի Հայերէնի և Առեւտրական Աշխարհագրութեան :

Չատ յօդուածներով պիտի խօսինք մատուռի պարունակութեան մասին : Բաժնեկիւնը Պօլսոյ համար 20 զրջ. Գուտապց համար 30 զրջ. Հասցէն է՝

Rédaction de la Revue « Sasoun » Bahadjé Capou, Yaldis Han 5-8 CONSTANTINOPLE

ԲԱՑ ՆԱՄԱԿ

« Արշալոյս » ի բաժանարարներուն կը խնդրուի մեր մինչև ցարդ չ'վճարող բոլոր յարգելի բաժանորդներէն, սրբապիւր բարեհաճին առանց մեր սպառնալի գիտնալիս պատուելու, իրենց բաժնեկիւնները զրկել
Rédaction du Journal ARCHA-LOUYCE հասցեով :

ԳԻՒՐՈՒԹԻՒՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆ

Ալ հոյ մի՛ ընէք ի՛նչ ձեր կարի մեքենաները Շայնայի մը գիտուն վրայ գրած հոս ու հոն պիտի փոխարեք նորոգութեան համար :

Պ Սարգիս Թաշճեան իրեն գիւմաց շատ մը յաճախորդներէն քաջաշքուած, առանձն մը ի վեր իր պաշտօնը թողլով յատուկ կտոր պատրաստած է և և իր շրջուն ու շարժական խառնութիւն « Վարձ » ին (անոր պարտիկ ձիւն անունն է) բարձած աճէն թողէ կանցնի աճէն օր և անչին մամ :

Չինքը ճանչնալու դժուարութիւն չկայ, Պալիկ ձիւն մը քաշած կատարին վրայ երբ մեքենաներու գործիչներ տեսնէք, որուն շար կողմը աճէն յիշուով գրուած է, մանաւանդ Réparation des Machines, անմիջապէս կ'ամ « Վարձ » յիշէք, և կամ քիչ մը անցին Սարգիս Թաշճեանը տեսնել ուղեցէք, իր կայարան կառէ բոսնային մէջ, անիկայ ոչ միայն կարի մեքենաներու նորոգութիւն կըլն անմասն յաջողութեամբ և և կրայ խառնալ, այլ և նոր մեքենաներ ալ կը հայտնայի :

Չ'մոռնալ նաեւ կազմ վաճառաներու և ֆոնօկրաֆիկոն նորոգութիւնը և նորերու հայտնալու :

Պ. Թաշճեան այս գիւրութիւնները ընծայելով իր նմաններուն ծառայած բլաւու գոնուտակութեամբ պիտի ունենայ, և քիչ մ'ալ գրած շահել պիտի ուզէ, իր պիտիակներուն զատախառնութեամբ յատկացնելու համար :